



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

8 նոյեմբերի 2019թ. թիվ 1655

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ՍԱՏԳ-ՆԵՐԻ ՄԻ ՇԱՐՔ
ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԵՐԵՎԱՆ ԳՈՐԾՈՒՂԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2018 թվականի նոյեմբերի 8-ի թիվ 1239-Ն որոշմամբ սահմանված կարգի 4-րդ և 10-րդ կետերով, հիմք ընդունելով Լոռու մարզպետարանի գլխավոր քարտուղարի 2019թ. նոյեմբերի 5-ի թիվ 06/104.3/08407-2019 գրությունը՝

Հ ր ա մ ա յ ու մ եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի Թումանյանի ՍԱՏԳ պետի ժամանակավոր պաշտոնակատար Գագիկ Էվոյանին, Սպիտակի ՍԱՏԳ պետի ժամանակավոր պաշտոնակատար Մարտին Հաջյանին և գլխավոր մասնագետ Աշոտ Նալբանդյանին, Ստեփանավանի ՍԱՏԳ առաջին կարգի մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար Մնացական Վարդանյանին, Տաշիրի ՍԱՏԳ գլխավոր մասնագետ Աիդա Իսրայելյանին *ս/թ* նոյեմբերի 11-ից հինգ օրով գործուղել ք. Երևան՝ «Բոնությունն ընտանիքում» լրացուցիչ կրթության կարիքների վերաբերյալ դասընթացին մասնակցելու համար:

2. Թումանյանի ՍԱՏԳ պետի ժամանակավոր պաշտոնակատար Գագիկ Էվոյանի բացակայության ժամանակ փոխարինող նշանակել Թումանյանի ՍԱՏԳ գլխավոր մասնագետ Գայանե Իսոյանին, Սպիտակի ՍԱՏԳ պետի ժամանակավոր պաշտոնակատար Մարտին Հաջյանի բացակայության ժամանակ փոխարինող նշանակել Սպիտակի ՍԱՏԳ գլխավոր մասնագետ Կարեն Մաթոսյանին:

3. Մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը՝ սահմանված կարգով փոխհատուցել գործուղման հետ կապված ծախսերը:

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԻ
ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ**

 Invalid signature

X 

ՎԱՆԵՐԻ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վ.ԽԱՉԱՏՐՅԱՆ